

պատու դատնելով, տան մեծը նրանց օրհնելով, ճանապարհ է դընում»⁽¹⁾ :

Հոս շատ հին աւանդութեանց հետքեր կան, ջրապաշտ-բեզմնապաշտ նախաքրիստոնէական հայ աւանդութեանց հետքեր, որոնք թաղուած մնացեր են Ղարաբաղի մէջ: Մեր այս տեսութիւնը պարզելու համար ըսենք որ վիշապանման հայկական գորգերը Ղարաբաղեան արտադրութիւններ են: Այս շրջանին մէջ գեռ մինչեւ ժիթ դարու վերջերը Կովկասեան գորգերու ընտրեալ գոյները կ'արտադրուէին: Գծածեւերը գլխաւորաբար վիշապաձեւ կերպաւորումներէ յառաջ եկած, կամ ջրապաշտութենէ ծագած կեռածեւերէ կազմուած ազաւաղումներ են:

Նախահայոց հեթանոսական կրօնքը մայրապաշտութիւնն էր, իր յարակից ջրապաշտութեամբ եւ բեզմնապաշտութեամբ, որոնց խտացած կերպաւորումը վիշապապաշտութիւնն էր: Այս մասին մենք առիթ պիտի ունենանք երկար խօսելու «գծածեւերու ծագման» բաժնին մէջ: Գորգերը մեծ դեր խաղացած ըլլալով քրիստոնէական եւ նախաքրիստոնէական հայ կրօնածէսերուն մէջ, բնական է մեծապէս ազդուած էին կրօնական խորհրդանշաններէ՝ իրենց գծածեւերուն շարադրութեան մէջ: Այս պարզ պատճառով ալ Վիշապը, մայրապաշտական եւ ջրապաշտական ուրիշ խորհրդանշաններու հետ հայ գորգերուն մէջ գործածուած է, անոնց տալով կրօնական նուիրականացում մը, զանոնք ընելով պաշտամունքի եւ նաեւ աւելորդապաշտութեանց առարկայ: Այդ նախկին պաշտաման հետքերն է որ մեր ժամանակակից Ղարաբաղից հայ գորգաչէնը անգիտակցօրէն գեռ կը պահէր, գորգը իր մայրապաշտական աւանդութեամբ յղութեան, բարի ծնունդի, սերաորոշման եւ այլ յարակից վիճակներու պաշտամունքի առարկայ նըկատելով: Եւ եթէ նոյնիսկ այլեւս գորգը չպարունակէր մայրապաշտութեան գծածեւերու հետքեր, դարձեալ անիկա առարկայ էր դարերով նուիրականացած թէեւ մոռցուած աւանդապաշտութեան պատճառաւ ըլլալ այն՝ ինչ որ դարեր առաջ իր գծածեւերը ըրած էին զայն:

Հետաքրքրական է որ Մերձաւոր Արեւելքի մէջ գորգը գլխաւոր մասն էր ամուսնանալիք աղջկան օժիտին, որուն համար «աղջկան գորգեր» (զըզ քիլիմ) ալ կային յատկապէս:

Դարձեալ կան աւանդութիւններ «թռչող գորգերու», որոնք օդասլաց կը ճախրէին. ասոնց եւ օդասլաց վիշապին մէջ կը դժուարանամ կապ մը գտնել:

Աւանդութեանց այս բաժնին կարեւոր նպաստ մըն ալ էլլիա է-Փէնտի իր մեծարժէք ուղեգրութեան մէջ կը կտակէ մեզի, որ այլուստ բոլորովին անծանօթ է:

(1) Բուրդ գզելը եւ գորգ գործելը Ղարաբաղում: - Կ. Կ. Մելիք Շահնազարեանց: «Հանդ. Ամս.», 1928, էջ 477-8: